# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## «ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ»
## «22» ՀՈՒՆՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N *«ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2-1»*

## ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «03» ապրիլի 2021թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով «22» հունվարի 2019թ. N *«ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2-1»* պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված հեռախոսային կապի ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ*

1.1 Պայմանագրի 3.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագրի գինը 2021 թվականի համար կազմում է 17 445 000 (Տասնյոթ միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ծառայության մատուցման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:»:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

### *2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ*

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

### *3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ*

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Յուքոմ» ՓԲԸ |
| հասցեն՝ ք. Երևան, կառավարական տուն 3 | ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9 |
| Բանկի անվանումը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| հ/հ՝ 900011019321 | հ/հ՝ 1570043102134100 |
| հվհհ՝ 01506515 | հվհհ՝ 00024873 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն՝ |
| ..................... Ս. Մուրադյան | ------------------------ Ա. Խաչատրյան |
| Կ.Տ. (ստորագրություն) | (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված
2021թ. «03» «փետրվարի» կնքված
N 1 համաձայնագրի
Հավելված N 2
«22» հունվարի 2019թ. կնքված
N ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211100/501 | Հանրային հեռախոսային ծառայություններ | | 1,744,500 | 3,489,000 | 4,942,738 | 6,396,476 | 7,850,286 | 9,304,024 | 10,757,762 | 12,211,500 | 13,956,000 | 15,700,500 | 17,445,000 | 17,445,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
հասցեն` ք. Երևան, կառավարական տուն 3
Բանկի անվանումը` ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ` 900011019321
հվհհ` 01506515
Գլխավոր քարտուղար`

.............................. Ս. Մուրադյան
Կ.Տ. (ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Յուքոմ» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ` 1570043102134100
հվհհ` 00024873
Տնօրեն`

------------------------------ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ